2017, ՍԵՊՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 18 (494)

Բիւզանդական Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

17 սեպտեմբերի

Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Կարո Փայլանին:

Նորին Սրբությունը ողջունեց պատգամավորի այցը Հայաստան՝ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի առիթով, եւ գնահատանքով անդրադարձավ նրա խորհրդարանական գործունեությանը:

Կարո Փայլանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց տարածաշրջանային զարգացումները եւ Թուրքիայի հասարակական կյանքում առկա իրավիճակը:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Թուրքիայի հայ համայնքի եւ ազգային կյանքը հուզող զանազան խնդիրների մասին:

19 սեպտեմբերի

Վարդանանց ասպետներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վարդանանց ասպետներ» կազմակերպության ավագ դիվանի անդամներին՝ գլխավորությամբ կազմակերպության ավագ սպարապետ Գերրի Զամանիկյանի:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց կազմակերպության գործունեությանը Հայաստանում եւ Սփյուռքում, տեղեկացվեց նաեւ աշխատանքների առավել արդյունավետ համակարգման նպատակով Հայաստանում մշտական գրասենյակի հաստատման մասին:

Վարդանանց ասպետների ավագ սպարապետն իր ողջույնի խոսքում հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ կազմակերպությունը շարունակելու է իր գործունեության շրջանակներում աջակցություն բերել Հայաստանին ու հայրենաբնակ ժողովրդին, ինչպես նաեւ զորակցել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց «Վարդանանց ասպետներ» կազմակերպության անդամներին՝ Սփյուռքում եւ Հայաստանում ծավալած ազգօգուտ գործունեության համար: Նորին Սրբությունն ընդգծեց, որ իրագործվող ծրագրերը նաեւ ամուր կապեր են ձեւավորում Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ, ինչին մեծապես կնպաստի ընկերակցության նորահաստատ գրասենյակը:

Վերջում Վեհափառ Հայրապետը կազմակերպության անդամներին մաղթեց երկարամյա արգասավոր գործունեութուն եւ հայանպաստ նորանոր ծրագրերի իրականացում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Փառեն արք. Ավետիքյանը:

20 սեպտեմբերի

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Արփինե Հովհաննիսյանի եւ ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գրիգոր Հովհաննիսյանի: Պատվիրակության կազմում էին Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը, կոնգրեսականներ Ջեյմս Սենսենբրենները, Ջեքի Սփիերը, Աննա Էշուն, Թալսի Գաբարդը:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց ԱՄՆ կոնգրեսականների Հայաստան կատարած այցի առիթով՝ կարեւորելով նման այցերը՝ Հայաստանի եւ Արցախի ժողովրդի խնդիրներին ու կարիքներին անձնապես հաղորդ դառնալու առումով: Այս իմաստով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի կարեւոր դերակատարությանը հայ-ամերիկյան հարաբերությունների սերտացման եւ զարգացման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նաեւ ի դեմս կոնգրեսականների, իր գնահատանքը փոխանցեց ԱՄՆ իշխանություններին, իբրեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ ներդրվող հետեւողական ջանքերի համար:

Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը կոնգրեսականներին տեղեկացրեց սեպտեմբերի 8-ին Մոսկվայում, միջնորդությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի, տեղի ունեցած Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի եւ իր հանդիպման եւ դրա արդյունքների մասին:

Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ Միջին Արեւելքի երկրներում տիրող ծանր պատերազմական իրավիճակին՝ մասնավորապես խոսելով դրա հետեւանքով քրիստոնեական փոքրամասնությունների կրած դժվարությունների եւ նեղությունների մասին: Հայոց Հայրապետն իր մտահոգությունը փոխանցեց ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչներին՝ տարածաշրջանում քրիստոնեական համայնքների կտրուկ նվազման կապակցությամբ, ինչպես նաեւ անդրադարձավ պատերազմական պայմաններում իրենց բնակավայրերը թողած փախստականներին շարունակական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացին, կարեւորեց այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը՝ պատմական արդարության վերականգնումով մարդկային կյանքում այսուհետ նմանօրինակ ողբերգությունների կանխարգելման առումով:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

22 սեպտեմբերի

Վրաստանի մշակույթի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գիորգաձեին՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի:

Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց Հայաստանի եւ Վրաստանի մշակույթի նախարարությունների միջեւ ձեւավորված սերտ կապերի եւ գործակցության առիթով՝ իբրեւ վկայություն երկու հավատակից ժողովուրդների դարավոր բարեկամության:

Միխեիլ Գիորգաձեն իր խոսքում անդրադարձ կատարեց հայ գործընկերների հետ արդյունավետ համագործակցությանը ու համատեղ մշակութային ծրագրերի իրագործմանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արծարծեց նաեւ Վրաստանում հայկական եկեղեցիների եւ մշակութային արժեքների պահպանությանն ու իրավական կարգավիճակին առնչվող հարցեր:

Հայոց Հովվապետը մտահոգությամբ բարձրաձայնեց մասնավորապես խոնարհված եւ փլուզման եզրին գտնվող մի շարք եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք եւ հոգածություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ վրաց իշխանությունների կողմից համապատասխան քայլեր կձեռնարկվեն հանգուցալուծելու նշյալ խնդիրները:

Վրաց նախարարն իր հերթին լուսաբանություններ տվեց այս ուղղությամբ իրականացված եւ ծրագրվող քայլերի մասին:

Շարունակությունը՝ էջ 2

22 սեպտեմբերի **Վրաստանի մշակույթի նախարարին**

Սկիզբը՝ էջ 1

Վեհափառ Հայրապետը նախարարից հետաքրքրվեց նաեւ Համայն Վրաստանի Իլյա Բ Պատրիարքի առողջական վիճակով՝ փոխանցելով Նորին Սրբությանն իր ողջույններն ու բարեմաղթանքները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծո օրհնությունն ու պահպանությունը մաղթեց Վրաստանին եւ վրաց ժողովրդին, պայծառություն՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցուն: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արարողակարգի եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը:

24 սեպտեմբերի **Բուենոս Այրեսի Մխիթարյան վարժարանի սաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Մխիթարյան վարժարանի 11-րդ լսարանի սաներին՝ ուղեկցությամբ Եղիա Ծ. վրդ. Քիլաղպյանի եւ Հայաստանի հետ վարժարանի կապերի պատասխանատու Ադրիանա Շուպարալյանի:

Նորին Սրբությունը, իր հայրապետական սերն ու օրհնությունը բերելով հայորդիներին, իր գնահատանքը փոխանցեց վարժարանի տնօրինությանը՝ կրթօջախի սաների ուխտագնացությունը Մայր Հայաստան կազմակերպելու համար:

Վեհափառ Հայրապետը վերհիշեց Արգենտինա կատարած հովվապետական ուղեւորության ընթացքում իր այցը Մխիթարյան վարժարան, գնահատանքով խոսեց կրթական հաստատության բարերարների ազգօգուտ ծառայության մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց նման այցելությունները, որոնք ոչ միայն առիթ են ընձեռում Հայաստանից հեռու հասակ առնող հայորդիներին ճանաչելու իրենց հայրենիքը, այլեւ անջնջելի դրոշմ են թողնում պատանիների հոգում եւ ներշնչման աղբյուր դառնում հետագա ողջ կյանքի համար: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ վարժարանում ուսանող օտարազգի աշակերտները եւս հարուստ տպավորություններով կվերադառնան Արգենտինա:

Երիտասարդները նաեւ պատասխանեցին Ամենայն Հայոց Հայրապետի հարցումներին, որոնք վերաբերում էին իրենց վարժարանին եւ Հայաստան այցի տպավորություններին: Իր հերթին Նորին Սրբությունն անհրաժեշտ լուսաբանություններ տվեց պատանիներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Հանդիպումից հետո հայորդիները Մայր տաճարում ներկա գտնվեցին Պատարագի արարողությանը:

«Ֆիլոխենիա» միջեկեղեցական կազմակերպության անդամներն



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայից ժամանած «Ֆիլոքսենիա» միջեկեղեցական կազմակերպության անդամներին՝ կազմակերպության նախագահ մոնսինյոր Վիլմ Սանդերսի գլխավորությամբ եւ Գերմանիայի հայոց թեմի Բավարիայի հայ համայնքի հոգեւոր հովիվ Այգիկ քհն. Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ կառույցը, հավատարիմ իր առաքելությանը, այսօր եւս շարունակում է կազմակերպել միջեկեղեցական հանդիպումներ, հնարավորություն ընձեռում տարբեր Եկեղեցիների հոգեւոր սպասավորներին ու ներկայացուցիչներին մեկտեղվելու եւ շփվելու միմյանց հետ: Վեհափառ Հայրապետը կարեւորեց միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդմանն ու սերտացմանն ուղղված ջանքերը եւ վերհիշեց Գերմանիայում իր հովվության տարիների ընթացքում ձեւավորված համագործակցությունը «Ֆիլոքսենիայի» եւ նրա հիմնադրի հետ, ինչպես նաեւ հետագա տարիներին ներկայիս նախագահի հետ ունեցած սերտ կապերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի դեմս ներկաների, իր խորին շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Գերմանիայի իշխանություններին՝ Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ որդեգրված բանաձեւի առնչությամբ՝ դրանում մեծապես կարեւորելով նաեւ Գերմանիայի եկեղեցական համայնքների դերակատարությունը:

Մոնսինյոր Վիլմ Սանդերսը եւս ուրախություն հայտնեց երկար սպասված հանդիպման առիթով, կարեւորեց համագործակցությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ նրա կառույցների հետ, ապա խոսեց «Ֆիլոքսենիայի» անդամների հերթական ուխտագնացությունը դեպի Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կազմակերպելու որոշման մասին:

Հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու հոգեւոր-կրթական հաստատություններին եւ հոգեւորականների պատրաստության խնդրին, ժողովրդի քրիստոնեական դաստիարակությանը եւ եկեղեցաշինությանը, Եկեղեցու կողմից դիմագրված մարտահրավերներին եւ ներկայի գործունեությանը: Անդրադարձ կատարվեց նաեւ Գերմանիայում իրենց ուսումնառությունը շարունակող հայ եկեղեցականներին եւ միջեկեղեցական կառույցի կողմից նրանց ցուցաբերվող զորակցությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը «Ֆիլոքսենիայի» անդամներին մաղթեց արգասաբեր ու բեղմնավոր գործունեություն:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արարողակարգի եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Անանյանը:

25 սեպտեմբերի **ՌԴ կրթության եւ գիտության նախարարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության կրթության եւ գիտության նախարար Օլգա Վասիլեւային՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց երկու բարեկամ ժողովուրդների միջեւ առկա դարավոր սերտ ու բարեկամական կապերի առիթով: Վեհափառ Հայրապետը ողջունեց երկու նախարարությունների միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը՝ կարեւորելով կրթական ոլորտում նման շփումները եւ փորձի փոխանակումը՝ աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախարար Վասիլեւային տեղեկացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության արգասավոր համագործակցության ու համատեղ իրականացվող միջոցառումների մասին՝ ընդգծելով կրթական համակարգում ազգային, հոգեւոր արժեքների ուսուցման կարեւորությունը: Նորին Սրբությունը նախարարին ներկայացրեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող կրթական հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան դպրանոցի, Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի, «Էօռնեկեան հանրակրթական դպրոցի», Գեւորգ Էմինի անվան Երեւանի թիվ 182 դպրոցի, հայորդյաց տների եւ կրթական այլ կենտրոնների գործունեությունն ու դրանց կարգավիճակը, անդրադարձ կատարեց հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասավանդմանը: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով արձանագրեց տարբեր ոլորտներում եւ ի մասնավորի՝ կրթության ասպարեզում Հայոց Եկեղեցուն հայրենի իշխանությունների կողմից ցուցաբերվող աջակցությունը:

ՌԴ կրթության եւ գիտության նախարարը եւս ուրախություն հայտնեց հանդիպման առիթով, ապա Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց կրթական համակարգում տեղ գտած բարեփոխումների վերաբերյալ: Մասնավոր անդրադարձ կատարվեց աստվածաբանության գծով ասպիրանտական կրթությանը եւ պետության կողմից Եկեղեցու հոգեւոր-կրթական հաստատությունների ճանաչմանը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը հետաքրքրվեց նաեւ Ռուսաստանում բնակվող հայորդիների՝ հայոց լեզվի, մշակույթի եւ պատմության ուսուցման հնարավորությունների վերաբերյալ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված հաստատուն եւ անխախտ պահի հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը եւ արդյունավորի նախարար Օլգա Վասիլեւայի գործունեությունն ու առաքելությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արարողակարգի եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

26 սեպտեմբերի **Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Օլիվիե Դասոյին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Օլիվիե Դասոյին՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն ուրախությամբ նշեց, որ հաճելի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հյուրընկալել Ֆրանսիայի բարեկամ ժողովրդի ներկայացուցիչներին: Վեհափառ Հայրապետը գնահատանքով նշեց ֆրանսիացի պատգամավորի անձնական ներդրումը հայ-ֆրանսիական խորհրդարանական բարեկամության ամրապնդման գործում:

Խոսելով Ս. Էջմիածնի հոգեւոր առաքելության, հայ ժողովրդի կյանքում ունեցած դերակատարության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ հայ ժողովուրդն իր քրիստոնեական զորեղ հավատքի շնորհիվ կարողացավ հաղթահարել պատմության ընթացքում իրեն բաժին ընկած բազում փորձությունները, այդ թվում նաեւ՝ Հայոց ցեղասպանությունը:

Նորին Սրբությունն այս կապակցությամբ իր խորին երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի բարեսեր ժողովրդին՝ Հայոց եղեռնը վերապրած հայորդիներին իրենց երկրում ապաստան տալու եւ օգնելու առնչությամբ:

Իր հերթին պատգամավոր Օլիվիե Դասոն նշեց, որ հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությունը շատ խոր է եւ ունեցել է բազում գեղեցիկ դրսեւորումներ: Պատգամավորը հույս հայտնեց, որ մարդկության պատմության մեջ այլեւս նման ողբերգություններ տեղ չեն գտնի:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պրն Դասոյին մաղթեց արդյունավոր գործունեություն՝ իր պատասխանատու առաքելության մեջ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ» ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության,

Հոգեւոր եղբա՛յր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,

Հարգարժա՛ն մասնակիցներ «Հայաստան-Սփյուռք» վեցերորդ համաժողովի,

Ողջունում ենք ձեզ համաժողովի գումարման առիթով եւ հայրապետական Մեր սերն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերում ամենքիդ: Ուրախ ենք, որ ազգային համախմբման միասնական տեսիլքով մեր ժողովրդի աշխարհասփյուռ զավակներն այսօր կրկին մեկտեղվել են Մայր հայրենիքում, Հայոց պետության հովանու ներքո՝ քննարկելու ազգային մեր կյանքը հուզող հարցեր ու խնդիրներ:

«Հայաստան-Սփյուռք» համաժողովները կարեւոր հարթակ են դարձել Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի միասնության զորացման, գործակցության խթանման եւ մեր ժողովրդի տարբեր հատվածների փոխճանաչման եւ առնչությունների ընդլայնման համար: Այսօր մեզ հայրենիքում համախմբել են մեր ընդհանուր պատասխանատվությունն ու մտահոգությունը մեր ժողովրդի ներկայի եւ ապագայի նկատմամբ: Աշխարհաքաղաքական զարգացումները եւ այդ համատեքստում մեր ազգային ինքնության առջեւ ծառացած մարտահրավերները, սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները, մեր հայրենիքի հզորացումն ու ապահովությունը ներկա մեր սերնդին վիճակված առաջնահերթ մտահոգություններն են:

Հայրենիք-Սփյուռք գործակցության շրջանակներում, իրավ է, զգալի ձեռքբերումներ ենք արձանագրել՝ զորացնելով Հայաստանն ու Արցախը եւ Սփյուռքում ազգային կյանքը: Նշանակալի է եղել սփյուռքահայերի մասնակցությունը հայրենական կյանքին՝ սկսած Արցախյան ազատամարտին անմիջական ու անձնվեր մասնակցությունից ու նորաստեղծ մեր երկրի կյանքում ներդրված միջոցներից մինչեւ այլ երկրներում ի նպաստ Հայաստանի ու Արցախի ծավալած քարոզչական աշխատանքները: Միաժամանակ հայրենի պետության կողմից ջանքեր են ներդրվել ամրապնդելու հայրենիքի եւ Սփյուռքի կապերն ու համագործակցությունը, աջակցելու Սփյուռքում գործող ազգային կազմակերպություններին եւ Սփյուռքի տարբեր հատվածների համախմբմանն ու առկա հնարավորություններն առավել նպատակային օգտագործմանը, սատարելու պատերազմական իրավիճակում հայտնված մեր ժողովրդի զավակներին, ինչպես Սիրիայում եւ Իրաքում:

Այսուհանդերձ՝ կատարված աշխատանքները չեն սպառել ծառացած մարտահրավերները: Մեզ շարունակում են մտահոգել Արցախի հիմնախնդիրը, Հայոց ցեղասպանության արդար պահանջատիրության հանդեպ շարունակվող ժխտողականությունը, արտագաղթը, սոցիալ-տնտեսական դժվարությունները հայրենիքում, խաղաղության ապահովումը մեր սահմաններում:

Մեր պետությունը՝ թեեւ բազում դժվարությունների առջեւ, համայն հայության պատվարն է եւ մեր ժողովրդի գոյատեւման երաշխավորը: Այսօր ժամանակն է, որ դառը փորձությունների ծանրությունը կրած մեր երկիրն ու ժողովուրդը կարողանան ամուր քայլերով ընթանալ վերելքի ուղիով, որը պահանջում է ուժերի ու կարողությունների ամբողջական կենտրոնացում ու համախմբում: Ազգային համախմբման հարցում ամենքս միակարծիք ենք ու հաստատակամ: Համախմբումը, սակայն, զերծ պիտի լինի հատվածական հետաքրքրություններից ու ժամանակավոր նպատակահարմարություններից: Պաշտոնը, հասարակական դիրքը, նյութական ու մտավոր կարողությունները, որոնցով օժտված են մեր ժողովրդի զավակները, պիտի ծառայեցվեն մեր երկրի պայծառացմանը եւ ամենուր մեր ժողովրդի առաջընթացին ու ազգային կյանքի զարթոնքին: Հայրենաբնակ թե սփյուռքահայ՝ հայրենիքի եւ ազգի հանդեպ կրում ենք նույն պատասխանատվությունը: Հայրենիքից չի կարելի երես դարձնել ճախողած գործի եւ կամ տեղ գտած անարդարության պատճառով: Հայրենիքից չի կարելի երես դարձնել, եթե այն նեղությունների, փորձությունների ու մարտահրավերների առջեւ է կամ նվազ հարուստ ու հարմարավետ է: Զինվորն ու ծառան ենք հայրենիքի: Այս պիտի լինի մեր նշանաբանը: Հայրենիքը մենք պիտի սիրենք այն պարզ պատճառով, որ մերն է, մեր հայրերի արյամբ ու քրտինքով նվիրագործված եւ մեզ ավանդված: Հայրենիքով է զորեղ յուրաքանչյուրը՝ իբրեւ ազգի զավակ, իբրեւ կրողն ու շարունակողը հայրենյաց ժառանգության, իսկ զորությունը հայրենիքի մեր ժողովուրդն է՝ ի հայրենիս եւ ի սփյուռս միասնաբար:

Եկող տարի նշելու ենք Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյա տարեդարձը, որը կոչ ու խրախույս է ազգային համախմբման: Մեկ դար առաջ այդ օրինակը բերեց մեր ժողովուրդը՝ միահամուռ կամքով պաշտպանելով հայրենիքը եւ վերակերտելով պետականությունը: Այսօր մեր երկրի պաշտպանունակության ամրապնդումը պահանջում է միասնական առավել ջանքեր, ինչպես եւ պատերազմի վտանգի ներքո գտնվող ժողովրդի զգոն ու սթափ գիտակցություն եւ առավել պատասխանատվություն: Մեր երկիրը հեռու պիտի պահենք ցնցումներից եւ ամեն ջանք պիտի գործադրենք՝ խաղաղությունը ամրագրելու եւ հասնելու Արցախի ճանաչման հաղթանակին:

Այս տեսլականով Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ օրհնի մեր այս համաժողովը, արդյունավորի ջանքերը համաժողովի կազմակերպիչների ու մասնակիցների եւ լուսավորի մեր մտքերը՝ գտնելու լավագույն ուղին մեր հայրենիքի ու ժողովրդի զորացման եւ առաջընթացի:

Թող Աստված խաղաղ պահի աշխարհը, մեր երկիրն ու համայն ժողովրդին:

Մեր Տիրոջ շնորհները, սերն ու ողորմությունը թող լինեն մեզ հետ եւ բոլորի, այսօր եւ միշտ: Ամեն:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսը եւ նրա ժամանակը» թեմայով

2017 թ. լրանում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եռամեծար հայրապետներից սբ Հովհան Օձնեցու գահակալման 1300-ամյակը:

Այս նշանավոր հոբելյանի առթիվ կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, հրատարակվում գրքեր՝ նպատակ ունենալով վերարժեւորել սբ Հովհան Օձնեցու գործունեությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանի առաջարկությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ու Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը համատեղ նախաձեռնել են «Հովհան Օձնեցի Իմաստասեր Կաթողիկոսը եւ նրա ժամանակը» թեմայով գիտաժողով, որը տեղի կունենա դեկտեմբերի 5-ին:

Գիտաժողովին կարող են մասնակցել հայագիտությամբ եւ աստվածաբանությամբ հետաքրքրված անձինք:

Զեկույցների թեմաների առաջարկությունները հարկ է հակիրճ նկարագրականով (շուրջ 250 բառ) ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարան՝ մինչեւ 2017 թվականի նոյեմբերի 10-ը (նկարագրականները եւ մասնակցության հայտերը կարող եք ուղարկել odzneci1300.conference@gmail.com էլ. հասցեով):

Գիտաժողովի զեկույցներն ի մի են բերվելու եւ հրատարակվելու առանձին հատորով:

Շքանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Սեպտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորաբաց «Գարեգին Ա» կրթական կենտրոնում տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանի արժանացան Հայոց ցեղասպանության մասին պատմող «Խոստում» ֆիլմի պրոդյուսեր Էրիկ Իսրայելյանը եւ ֆիլմի ռեժիսոր Թերի Ջորջը:

Հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի եւ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանի ողջույնի խոսքերով:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի ներքո բերվեցին հայրապետական պարգեւները, որոնցով Ամենայն Հայոց Հայրապետը զարդարեց մեծարյալների կուրծքը:

Արարողությունն ամփոփվեց Գարեգին Բ Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ ՀԲԸՄ-ի նախաձեռնությամբ առիթ է ընձեռվել Հայոց Եկեղեցու եւ աշխարհասփյուռ ժողովրդի անունից Սուրբ Էջմիածնում բարձր պարգեւների արժանացնելու երկու անձանց, որոնք իրենց կարեւոր աշխատանքով ներկայացան ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ ողջ աշխարհին՝ դրանով իրենց ներդրումը բերելով հայ ազգի իրավունքների եւ նրա նկատմամբ արդարության հաղթանակի նվիրական ու սուրբ գործին:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ազգային հերոս, մեծ բարերար Քըրք Քըրքորյանի տեսիլքի իրագործման համար ներդրված ջանքերը: Նորին Սրբությունը նկատեց, որ բազում փորձեր են արվել նկարահանելու Հայոց ցեղասպանությանը նվիրված ֆիլմ, եւ բնավ դյուրին չէ նման մեծածավալ, մոնումենտալ մի գործ իրականացնելը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ բոլորը մասնավոր ապրումներով ու զգացումներով են դիտել ֆիլմը, որովհետեւ ամենքի իղձն ու ցանկությունն էր ունենալ մի ֆիլմ, որը մարդկությանը ֆիլմարվեստի ճանապարհով կներկայացներ հայ ժողովրդի այն մեծ ողբերգությունը, որ իրագործվեց Օսմանյան Թուրքիայի կողմից, երբ մեկուկես միլիոն հայորդի նահատակվեց իր պատմական հայրենիքում, իսկ մնացյալը հայրենազրկվեց:

Նորին Սրբությունը շեշտեց, որ Աստծու ողորմությամբ հայ ժողովուրդը՝ շնորհիվ իր հավատքի եւ մեծ կամքի, կարողացավ վերապրել այդ ողբերգությունը եւ երեք տարի անց Սարդարապատում պարտության մատնել ցեղասպան թուրքի կանոնավոր բանակին:

Վերջում Հայոց Հայրապետն իր աղոթքն ու բարեմաղթանքներն ուղղեց ֆիլմի պրոդյուսերին եւ ռեժիսորին՝ նորանոր ներշնչանքներով արգասավորելու իրենց կյանքը եւ շարունակելու բարի գործեր մատուցել համայն մարդկությանը:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքն ու շնորհավորանքները փոխանցեց կրթական կենտրոնի բարերարներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին՝ հաստատության նորամուտի առիթով մաղթելով քաջառողջ կյանքի բազում տարիներ՝ վայելելու իրենց եկեղեցաշեն ու հայրենասեր բարի իրագործումները:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, Մայր Աթոռի բարերարներ, ՀԲԸՄ-ի անդամներ, մեծարյալների հարազատներ եւ մտերիմներ:

Այնուհետեւ հյուրերը շրջայց կատարեցին «Գարեգին Ա» կրթական կենտրոնում, ծանոթացան նորաբաց հաստատության պայմաններին:

Նույն օրը Մայր տաճարում մատուցված Պատարագի ընթացքում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգու խաղաղության համար:

Հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց Հանրապետական մաղթանք՝ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի:

Արարողությանը ներկա էին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, պետական այրեր, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի մասնակիցներ, հասարակական գործիչներ:

Մաղթանքի ընթացքում հոգեւոր դասն ու հավատավոր ժողովուրդը միահամուռ աղոթք բարձրացրեցին Հայաստանի Հանրապետության ապահովության եւ անսասանության, ինչպես նաեւ խաղաղ եւ առաջընթաց կյանքի համար: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը ծնրադիր հայցեցին երկնավոր Տիրոջ հովանին աշխարհասփյուռ հայոց ազգին:

Արարողության ավարտին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը միածնաէջ Մայր տաճարից իրենց պատգամը հղեցին ժողովրդին:

Հոգեւոր եղբա՛յր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,

Գերաշնորհ ու հոգեշնորհ հայրե՛ր,

ՀՀ իշխանությանց պատվարժա՛ն ներկայացուցիչներ,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Գոհունակ սրտով եւ առ Աստված փառաբանությամբ միածնաէջ Մայր տաճարում Հայաստանի Հանրապետության 26-րդ տարեդարձի առիթով կատարեցինք Հանրապետական մաղթանք՝ հայցելով խաղաղություն ու բարօրություն հայրենի մեր երկրին ու ժողովրդին եւ համայն աշխարհին:

Համազգային տոն է տարեդարձը մեր անկախ պետականության, որը պսակն է հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի, մեր հայրենիքի մաքառումների ու հաղթանակների, նաեւ՝ վկայությունը քրիստոնեական մեր ինքնության ու գոյության: Արդարեւ, մարդկային ուժերը չպիտի բավարարեին դիմակայելու դարերի ընթացքում մեր ժողովրդին բաժին ընկած հալածանքներին ու անարդարություններին, չպիտի բավարարեին պահպանելու հավատը ազատության ու արդարության հանդեպ եւ հույսն ու լավատեսությունը խաղաղ ու լուսավոր կյանքի: Մեր ժողովուրդը՝ Տիրոջ փոքրիկ հոտը, ապրեց ու հարատեւեց ոչ թե մարդկային իր հնարավորություններով, այլ՝ քրիստոնեական հավատքով եւ Աստծո խնամքով, որի համար առաքյալն ասում է. «...դուք ազգ էք ընտիրք, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, Աստծու սեպհական ժողովուրդ...»:

Առաքյալի պատգամի լույսի ներքո մեր առջեւ հառնում են Քրիստոսի սիրով իրենց հոգու ազնվությունն ու սերը ազգին ծառայեցրած, մեր հայրենիքի ազատության, մեր պետականության ամրությանն ու պայծառությանը իրենց կյանքն ու ջանքերը նվիրած մեր բարեպաշտ թագավորներն ու իշխանները, լուսամիտ վարդապետներն ու հայրապետները, մեր ժողովրդի բյուրավոր վեհանձն ու արի զավակները, ովքեր հավատքով ու նվիրումով սրբագործել են մեր ժողովրդի աստվածընտիր առաքելության ճանապարհը: Արդարեւ, մեր ժողովուրդը երբեք իր առջեւ ընդամենը գոյատեւելու խնդիր չի դրել: Մեր ձգտումը միշտ եղել է ավելին՝ հասնել բաղձալի ազատության, պահպանել հավատքի սրբությունը, ապրել Աստծո փառքի համար՝ մեր ստեղծածը, մեր կյանքը ծառայեցնելով բարուն, արդարությանն ու ճշմարտությանը:

Դարավոր մեր հայրենիքում մենք մեր պետականությունը վերակերտեցինք, որպեսզի հայրենի մեր երկիրը համայն հայության տունը դարձնենք, մեր ինքնությունը անխախտ ու անվտանգ պահենք, աշխարհի հետ մեր լեզվով ու ոճով խոսենք, մեր մշակույթն ու դպրությունը զարգացնենք, մեր երկիրը մեր բազկի զորությամբ, մեր հոգու արիությամբ պաշտպանենք: Այսօր, երբ մենք ենք տնօրինողը մեր կյանքի եւ կերտողը մեր ապագայի, պիտի հիշենք եւ երբեք չպիտի մոռանանք, որ ազատության չարաշահումը նույնքան վտանգավոր է, որքան ազատություն չունենալը: Զգույշ եղեք,- հորդորում է առաքյալը,- չլինի թե ազատությունը դառնա չարիքի պատրվակ (հմմտ. Ա Պետ. Բ 16): Ազատություն ունենալ նշանակում է պատասխանատվություն կրել մարդկանց, սեփական երկրի եւ ժողովրդի համար: Ազատությունն ու անկախությունը այսօր էլ իմաստ ու արժեք են ստանում, երբ քրիստոնեական մեր արժեքները, միմյանց հանդեպ սերը, ազգ, պետություն շենացնելը գերիշխող նպատակներ են մեր կյանքում: Թանկ ենք վճարել մեր անկախ պետականության համար: Պահենք Հայաստան մեր երկիրը, մեր հայրենիքը, որ լինի պատվարը ազգահավաքության, մեր աշխարհացրիվ ժողովրդի ապահովության եւ առաջընթացի, պահենք մեր երկիրը մեր զավակների եւ սերունդների լուսավոր կյանքի համար, պահենք մեր երկիրը Աստծո փառքի համար:

Գոհության մաղթանքով, սիրելինե՛ր, վերստին աղոթք բարձրացնենք առ Աստված եւ հայցենք, որ Տերը պահպանի մեր ժողովրդին միասնական ու համախումբ, արի ոգով, ամուր հավատքով, որպեսզի մշտապես զորանա լինելու ընտրյալ ազգ, թագավորություն, քահանայություն, ազգ սուրբ եւ Աստծո սեփական ժողովուրդ եւ իր հոգու առաքինությունները ծառայեցնի հայրենաշեն ու ազգանվեր իր նպատակներին: Թող Աստված խաղաղություն ու բարօրություն պարգեւի աշխարհին, մեր հայրենիքին ու աշխարհասփյուռ ժողովրդին, որպեսզի խնդությունն ու բերկրանքը իր հոգում մեր ժողովուրդը միշտ տոնախմբի հայոց պետության անկախությունը եւ շնորհավորանքի ու բարեմաղթանքի ջերմ խոսքեր ուղղի միմյանց: Թող Տիրոջ սերը, շնորհը եւ ողորմությունը հովանի լինեն մեր երկրին, Հայաստան եւ Արցախ աշխարհին, եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն:

Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսին նվիրված վավերագրերի ժողովածուների

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, տեղի ունեցավ երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին նվիրված վավերագրերի եւ արխիվային նյութերի երկու ժողովածուների շնորհանդեսը:

Ժողովածուներն ընդգրկում են Հայաստանի ազգային արխիվում եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության արխիվում պահվող վավերագրերն ու արխիվային նյութերը: Վավերագրերի Ա հատորը տպագրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իսկ Բ հատորը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի կողմից:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լ. Մկրտչյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Տեր-Ղեւոնդյանը, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, Ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանը, Մատենադարանի աշխատակիցներ, գիտնականներ եւ ճեմարանականներ:

Գարեգին Ա Հայրապետի ծննդյան 150-ամյակի եւ վախճանման 65-րդ տարելիցի ոգեկոչմանը ձոնված երեկույթն սկսվեց Տերունական աղոթքով եւ Մայր Աթոռի արխիվի տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանի բացման խոսքով:

Այնուհետեւ շնորհանդեսի մասնակիցները դիտեցին Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսին նվիրված ֆիլմը, որից հետո ժողովածուների բովանդակությանը եւ կատարված աշխատանքին անդրադարձ կատարեց Հայաստանի ազգային արխիվի աշխատակից պատմ. գիտ. թեկ. Գոհար Ավագյանը, ում ազնիվ աշխատասիրությամբ պատրաստվել են ներկայացված արժեքավոր հրատարակությունները:

Այս առիթով խոսքով հանդես եկավ նաեւ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ հանգամանորեն անդրադառնալով Հովսեփյան Կաթողիկոսի լուսավոր կերպարին, ժամանակի դժվարին պատմական հանգամանքներում նրա նվիրյալ գործունեությանը եւ ազգին ու Հայոց Եկեղեցուն մատուցած անգնահատելի ծառայությանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանն իր հերթին խոսեց Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի գիտական վաստակի մասին:

Հանդիսությանը Հայաստանի պետական կամերային երգչախմբի (գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան) կատարմամբ հնչեցին հոգեւոր երգեր, հայ եւ օտար կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Վերջում Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի մեծ վաստակի եւ հիշատակի առջեւ իր խոնարհումն արտահայտեց Նորին Սրբություն Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը:

«Պատմության մեջ մեծություններ կան, որոնք լույս են դառնում, լույս են մնում պատմության հուշերի դիմաց: Պատմության մեջ մեծություններ կան, որոնք իրենց հոգեմտավոր ստեղծագործությամբ վեր են պատմության հոգուց: Այսպիսին եղավ եւ այսպիսին մնաց Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը:

Հայ լեզվի բազմաշնորհ, բազմավաստակ բառերը տկար են նկարագրելու Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսի կյանքը եւ հոգեմտավոր վաստակը Սուրբ Էջմիածնից սկսյալ մինչեւ Ռուսաստան, Թիֆլիս, Ամերիկա եւ Անթիլիաս: Հարուստ կյանք ունեցավ եւ իր կյանքով ու վաստակով հարստացրեց մեր Եկեղեցու ու ժողովրդի կյանքը: Հայաստանն ապրեց նաեւ Հայաստանից դուրս: Հայաստանն իր հետ տարավ, ուր որ գնաց. Հայաստանը՝ իր ոգիով, իր տագնապներով, իր տեսիլքով, Հայաստանը՝ իր դարերով, իր քարերով, ձեռագրերով, մանրանկարներով: Ճանաչեց, ուսումնասիրեց եւ ապրեց նրանով, ինչ որ ուսումնասիրեց:

...Պաշտամունքի հասնող սեր ունեցավ հայ մշակույթի նկատմամբ, մեր Եկեղեցու աստվածաբանությունը, հավատքը, ծեսը, մեր ողջ պատմությունը դիտեց եւ արժեւորեց հայ մշակույթի լույսի տակ, որովհետեւ տեսավ, վերլուծեց, որ մեր ժողովրդի կյանքում Հայաստանը, հայրենիքը, մշակույթը, հավատքը, Եկեղեցին սերտորեն ընդելուզված են իրար հետ»,- ընդգծեց Արամ Ա Կաթողիկոսը՝ խոսելով նվիրյալ հովիվ, հանձնառու ուսուցիչ, հայրենասեր, մտավորական եւ գիտնական բազմաշնորհ Գարեգին Ա Հայրապետի մասին:

Արամ Ա Կաթողիկոսը նաեւ անդրադարձավ Գարեգին Ա Հովսեփյանի հայրապետության տարիներին, հավատքով ու հանձնառությամբ հայրենիքին ու ժողովրդին այդ հանգամանքի մեջ ծառայելու մղումին՝ շեշտելով. «Գարեգին Հովսեփյանց եղավ, մնաց ու կմնա մեծություն, Հայ Եկեղեցու ճառագայթող մեծություններից մեկը»:

Շարունակությունը՝ էջ 5

Հայկ եւ Էլզա Տիտիզյանների անվան «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացումը

Սեպտեմբերի 24-ին Երեւանում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյանների անունը կրող «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման արարողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո «Վարպետաց դպրոցը», որ վերակառուցվել է «Երեւան, իմ սեր» ծրագրի շրջանակներում, «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի կողմից ծառայեցվելու է որպես վերականգնողական սոցիալ-կրթական, մշակութային կենտրոն՝ ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների, փախստական ու տեղահանված, պատշաճ խնամքից զուրկ եւ սոցիալապես անապահով խավերի մանուկների համար:

Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ Կառավարության անդամներ, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը, Մայր Աթոռի բարերարներ, ՀԲԸՄ-ի անդամներ եւ այլ հրավիրյալներ:

«Վարպետաց դպրոցի» մուտքի կարմիր ժապավենը հատեցին Ամենայն Հայոց Հայրապետը, «Երեւան, իմ սեր» հիմնադրամի նախագահ Արմեն Սարգսյանը եւ Մայր Աթոռի բարերար Հայկ Տիտիզյանը:

Ապա բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի բարերար, հիմնադրամի նախագահ եւ Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը՝ ներկայացնելով ծրագրի նպատակները, կառույցի ստեղծման պատմությունը եւ այդ գործում Եկեղեցու կարեւոր դերակատարությունը: Տիար Արմեն Սարգսյանն իր երախտագիտությունը հայտնեց ՀՀ նախագահին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ծրագրին ցուցաբերած անմիջական աջակցության համար, ինչպես նաեւ շնորհակալական խոսք ուղղեց կառույցի հիմնական բարերարներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին ու նախագծին աջակցած շուրջ 150 բարեկամներին:

Իր սրտի խոսքն ասաց նաեւ տիար Հայկ Տիտիզյանը՝ ուրախություն հայտնելով նման ազգօգուտ ծրագրին մասնակից լինելու կապակցությամբ: Մեծանուն բարերարը գոհունակությամբ ընդգծեց, որ այս կառույցի առնչությամբ Վեհափառ Հայրապետի տեսլականն այլեւս իրականություն է, եւ հորդորեց ամենքին համախմբել ուժերը՝ ծրագրի հետագա ընթացքի բարեհաջող իրագործման համար:

Այնուհետեւ, նախագահությամբ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նորակառույց հաստատության օրհնության կարգը, որի ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղեց ներկաներին:

Նորին Սրբությունը, գոհություն բարձրացնելով առ Աստված՝ մի նոր հայրենաշեն ձեռնարկի իրագործման առիթով, վերհիշեց, թե ինչպես դեռեւս իր՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության շրջանում ձեռք բերվեց առաջնորդարանի մերձակայքում գտնվող այս շենքը, եւ ծրագրվեց վերակառուցել այն՝ իբրեւ մի նոր հայորդյաց տուն: Վեհափառ Հայրապետը գոհունակության զգացումով ընդգծեց, որ շուրջ 20 տարի անց այդ ծրագիրն այլեւս իրականություն է «Երեւա՛ն, իմ սեր» ծրագրի նախագահ Արմեն Սարգսյանի ջանքերի շնորհիվ, եւ այսուհետ գեղեցիկ ու հարմարավետ հաստատության հարկի ներքո գիտելիքներ եւ հմտություններ պիտի ձեռք բերեն ու կրթվեն հազարավոր մանուկներ ու պատանիներ:

«Հիմնադրման օրվանից Հայաստանյայց Եկեղեցու առաքելության կարեւորագույն մասը կազմել են լուսավորության, կրթական նվիրական գործն ու մանկանց դաստիարակությունը: Այս տեսլականով են ազգային-եկեղեցական մեր կյանքում ստեղծվել հայ մանկավարժության ու դաստիարակության պսակը հանդիսացող դպրոցներն ու վարժարանները, որտեղ մեր զավակունք հաղորդ են դարձել մեր հոգեւոր-ազգային անանց արժեքներին ու հայոց պատմության փառավոր էջերին: Նոր սերնդի կրթության ու դաստիարակության աստվածահաճո այս առաքելությանն իր մասնակցությունը բերելու ազնիվ զգացումով է, որ դեռեւս 2 տարի առաջ մեր Եկեղեցու նվիրյալ զավակ ու բարերար, Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան տիար Արմեն Սարգսյանն առաջարկ ներկայացրեց «Երեւա՛ն, իմ սեր» ծրագրի շրջանակներում վերակառուցելու եւ ավարտին հասցնելու այս շինությունը՝ որպես ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար նախատեսված սոցիալ-մշակութային կենտրոն: Նույն ազնիվ մղումով նա իր իսկ կողմից կառուցած Մայր Աթոռի Ս. Վարդան - Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանի հարեւանությամբ բարեկարգում է Սուրբ Էջմիածնի այգին՝ այնտեղ ստեղծելով երեխաների համար եւս մի կրթական-մշակութային կենտրոն: Մեկ այլ կրթական կենտրոնի կառուցում տիար Սարգսյանը ծրագրում է Երեւանի Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու հարակից տարածքում»,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Կրթական հաստատության բացման առիթով Գարեգին Բ Կաթողիկոսն իր բարձր գնահատանքը բերեց Մայր Աթոռի նվիրյալ բարերարներ տեր եւ տիկին՝ Արմեն եւ Նունե Սարգսյաններին, ինչպես նաեւ կրթօջախի հիմնական բարերարներ, Հայ Եկեղեցու բարեգործ զավակներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին:

Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ հավատավոր Տիտիզյան ամոլի կենսագրության մեջ սա առաջին ազգօգուտ եւ հայրենանպաստ նախաձեռնությունը չէ, եւ ի գնահատումն Տիտիզյան ընտանիքի՝ հերթական այս կարեւոր ներդրման՝ նորակառույց «Վարպետաց դպրոց» հայորդյաց տունն այսուհետ կրելու է Հայկ եւ Էլզա Տիտիզյան ամոլի անունը:

Հայրապետական իր սերն ու ողջույնները բերելով բացման արարողության բոլոր մասնակիցներին՝ Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց միջոցառմանը մասնակից բարերար հայորդիներին եւ կենտրոնի բացմանն իրենց ներդրումն ունեցած բոլոր անհատներին եւ կազմակերպություններին:

«Չկա ավելի երախտալից ու շնորհակալ գործ, քան մեր ապագայի հուսալի տեսլականի իրագործումը՝ ի դեմս մեր մատաղ սերնդի արժանավայել կրթության: Հայրենաշինության, ազգային ոգու մշտանորոգման եւ պահպանման լավագույն գրավականն են կրթական կենտրոններն ու դպրոցները»,- շեշտեց Գարեգին Բ Հայոց Հայրապետը՝ հորդորելով հավատարիմ մնալ լուսավորության եւ մանկանց կրթության հուսալի առաքելությանը, որը դարեր շարունակ առաջնորդել է քրիստոսասեր մեր ժողովրդին:

Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթքով հայցեց Երկնավորին լուսավոր ու պայծառ պահել հայրենի կրթօջախները եւ մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ ժողովրդին:

Վերջում տեղի ունեցավ շրջայց նորակառույց կրթական հաստատությունում, հյուրերը ծանոթացան «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան պայմաններին, զրուցեցին նրա առաջին փոքրիկ այցելուների հետ:

Շնորհանդես Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 4

Վավերագրերի շնորհանդեսն ամփոփվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով: Հայրապետական սիրով ողջունելով հանդիսությանը մասնակից հոգեւոր դասին եւ հավատավոր հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես ասաց. *«Մեր Սուրբ Եկեղեցին, որ դարերի հոլովույթում հաճախ է դիմագրավել նեղությունների, գործել պատմական ու քաղաքական դժվարին պայմաններում, շնորհիվ առաքինազարդ Հայրապետների՝ փառքով է վերհառնել փորձություններից ու շարունակել տերունապատվեր իր առաքելությունը: Ահա այսպիսի մեծանուն Կաթողիկոսներից է Գարեգին Ա Հովսեփյանը, ում անունն արձանագրված է մեր նոր ժամանակների պատմության կարեւոր իրադարձությունների բարձրակետում:*

«Այր՝ լի շնորհօք եւ զօրութեամբ» (Գործք Զ 8): Նոր Կտակարանի այս խոսքերը ճշմարտապես բնորոշում են Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսին: Նա Քրիստոսի հավատարիմ ու քաջ զինվոր էր հոգեւոր անդաստանում, միության ջատագովն ու իրագործողն էր ներեկեղեցական ասպարեզում, փայլուն միտք էր գիտական աշխարհում, ոգի ու սխրանք էր մարտի դաշտում, մեծ հայ եւ ականավոր գործիչ՝ ազգային կյանքում: Նա իր հովվական ու առաջնորդական գործունեության բոլոր տարիներին հայրական խնամքով, սիրով ու հոգատարությամբ հովվեց մեր ժողովրդի զավակներին, պայծառացրեց հավատքը, հավելեց ազգասիրությունն ու հայրենանվիրումը: Տիրոջ անձնվեր սպասավորի առաջնորդության ներքո վերելք ու զարթոնք ապրեց ազգային-եկեղեցական կյանքը Ղրիմի եւ Նոր Նախիջեւանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց թեմերի:

Մեր ժողովրդի համար օրհասական պահին Քրիստոսի նվիրյալ սպասավորը դարձավ ազգի ու հայրենյաց պաշտպանության զինվոր, «հովիւ քաջ, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11): Սարդարապատում նա հառնեց որպես նոր Ղեւոնդ Երեց եւ մահապարտների գնդի ու հայոց աշխարհազորի հետ իր ավանդը բերեց հայրենիքի պաշտպանության նվիրական գործին եւ հաղթանակի կերտմանը, որը դարձավ հիմքը մեր անկախ պետականության հաստատման:

Երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանն առաքելության ծանրաբեռն վաստակով ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, եւ ինչպես վկայեց Մեր հոգեւոր եղբայր Արամ Ա Կաթողիկոսը, առավել շենացրեց Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, նվիրական տեսլականներ կյանքի կոչեց, եկեղեցանպաստ ու ազգօգուտ ծրագրեր իրագործեց: Նա նորովի ցոլացրեց Լուսավորչի տեսիլքի լույսը Անթիլիասում, միաբանության լույսը՝ տարաձայնությունները հարթելու, երկպառակության տանող ընթացքները կանխելու, մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգի միասնությունը հաստատուն պահելու: Եվ խորհրդանշական է, որ այսօր Գարեգին Ա Հովսեփյանի վավերագրերի ու արխիվային նյութերի ժողովածուների շնորհանդեսին մասնակցում ենք Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ միասնաբար՝ ի նշան հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանում քրիստոսապատվեր սիրո ու միաբանության, որի ավանդույթների ջատագովն ու պաշտպանն է եղել մեծանուն հայրդին:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսը, եկեղեցական անդաստանում բեղուն ծառայություններից զատ, մեր ժողովրդին պարգեւեց նաեւ իր գիտական ու գրական գործունեության արդյունքները: Նրա աշխատություններն ընդգրկեցին հայագիտության գրեթե բոլոր բնագավառները՝ պատմություն, բանասիրություն, բանահյուսություն, գրչություն ու մանրանկարչություն, արվեստ, եկեղեցագիտություն, հնագիտություն, ձեռագրագիտություն: Ահա այսպես է այսօր մեր առջեւ պատկերվում պայծառ կերպարը Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի՝ մեծ մարդ, ազգի արժանավոր զավակ, Քրիստոսի հավատարիմ ծառա»:

Հայոց Հովվապետն իր բարձր գնահատանքը հայտնեց ժողովածուների հրատարակության գործում իրենց ազնիվ ջանքերը ներդրած բոլոր անձանց՝ ի մասնավորի Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանին եւ աշխատակից Գոհար Ավագյանին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ այս հրատարակությունները, որ արժանի տուրք են Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի ծննդյան 150-ամյակի եւ վախճանման 65-րդ տարելիցի ոգեկոչման առիթով, մեծապես նպաստելու են ազգային-եկեղեցական մեծ գործչի առաքելության վերարժեւորմանը եւ դառնալու են նոր ոգեշնչման աղբյուր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին

Սեպտեմբերի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելին՝ Բունդեսթագի ընտրություններում Քրիստոնյա-դեմոկրատական դաշինքի հաղթանակի կապակցությամբ:

«Գերմանիան Ձեր իմաստուն առաջնորդությամբ կարողացավ հաղթահարել վերջին տարիներին առաջ եկած քաղաքական, տնտեսական մարտահրավերներն ու դժվարությունները եւ շարունակեց իր զարգացման վերընթաց ուղին՝ կարեւոր ներդրում ունենալով նաեւ աշխարհում կայուն խաղաղության ամրապնդման գործում: Ուրախ ենք, որ Գերմանիայի ժողովուրդը, բարձր գնահատելով Ձեր կարողություններն ու փորձառությունը, պետությունը ղեկավարելու պատասխանատու առաքելությունն առաջիկա տարիներին դարձյալ վստահեց Ձեզ:

Մեր մաղթանքն է, որ հայ-գերմանական միջպետական զարգացող հարաբերությունները շարունակեն արդյունավորվել՝ ի նպաստ մեր երկու ժողովուրդների բարօրության:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված խաղաղ ու անվտանգ պահի Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը եւ օրհնի բարեսեր Ձեր ժողովրդին»,- ասված է Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորագրում:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի 300-ամյակին նվիրված գիտաժողով Մոսկվայում

Սեպտեմբերի 15-ին Մոսկվայում՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդարանի հանդիսությունների դահլիճում, իր աշխատանքն սկսեց «Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի 300-ամյակ. պատմություն եւ ներկա» միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին շուրջ 60 հայագետ, պատմաբան, աստվածաբան, արվեստագետ եւ մշակութաբան Հայաստանից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից:

Գիտաժողովը բացվեց թեմակալ առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի բացման խոսքով: Անդրադառնալով թեմի հիմնադրման պատմական հոբելյանի առիթով կոնֆերանսի կազմակերպմանը՝ սրբազանն ընդգծեց, որ այն, ամենքին մեկտեղելով հանուն նախնյաց սրբազան ժառանգության պահպանության, շարունակությունն է անանց արժեքների վերածնության եւ այդպիսով նպաստում է հոգեւոր, մշակութային եւ գիտական փոխհարստացմանը, հայ եւ ռուս հավատակից ժողովուրդների եղբայրական կապերի ամրապնդմանը:

Այնուհետեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներին բերեց հայրապետական իր օրհնությունը եւ պատգամը.

«Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ մեր ժողովրդի կյանքում անգնահատելի դերակատարություն ունեցած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի պատմական այս թեմը թեւակոխում է իր հոբելյանական 3-րդ հարյուրամյակը: Ստեղծվելով մեր Եկեղեցու եւ ժողովրդի համար պատմականորեն ու քաղաքականապես բարդ ու դժվարին պայմաններում՝ տիրախնամ թեմը հարաճուն մասնակցություն է ունեցել Հայ Եկեղեցու առաքելության՝ հոգեւոր խնամքի ներքո համախմբելով ու պահպանելով ռուսաստանաբնակ մեր ժողովրդին: Թեմի գործունեությունը բազմարդյուն է եղել մեր ազգային-եկեղեցական, գիտական, գրական ու մշակութային կյանքում: Մեր ժողովրդի հավատավոր եւ ազգասեր զավակների ջանքերով այստեղ կառուցվել են հայկական եկեղեցիներ, ստեղծվել մեր ազգային դպրության ու լուսավորության, գիտության ու մշակույթի նշանավոր կենտրոններ ու հաստատություններ, որոնք վառ են պահել հավատքը մեր ժողովրդի, սերը առ հայրենին ու ազգս հայոց եւ տեսլականը հայրենի պետականության վերակերտման՝ աջակցության հույսեր կապելով նաեւ ռուսաց բարեպաշտ պետության հետ: Ռուսիո օրհնյալ տերության հովանու ներքո ապրող մեր ժողովրդի զավակները, հասնելով մեծ հաջողությունների, նաեւ իրենց բարի ավանդն են բերել երկրի պետական, հասարակական ու տնտեսական կյանքին, ռազմական փառքին, գիտությանը ու մշակույթի զարգացմանն ու առաջընթացին՝ զորացնելով եղբայրական սերը հավատակից հայ եւ ռուս ժողովուրդների»:

Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց այսօր Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի եկեղեցաշեն եւ ազգանպաստ առաքելության զարգացումը, որ արդյունավորվում է ջանքերով հոգեւոր սպասավորների ու բարեպաշտ հայորդիների՝ գլխավորությամբ բարեխնամ առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ նորանոր ձեռքբերումներով ու հաջողություններով է պսակվում ժողովրդին հավատքի ու փրկության ճանապարհով առաջնորդելու, Մայր Եկեղեցու շուրջ համախմբված հայ հավատացյալների հոգեւոր եւ հայեցի դաստիարակությունն ու կրթությունը կենսունակ պահելու սպասավորությունը: Իր գնահատանքը բերելով գիտաժողովի կազմակերպիչներին ու աջակիցներին՝ Հայոց Հայրապետն այս գիտաժողովը լավագույն առիթ նկատեց՝ նոր ժամանակների հրամայականներին ընդառաջ վերանայելու եւ վերարժարժելու թեմում Հայոց Եկեղեցու գործունեության անցյալի ձեռքբերումները եւ ապագայի տեսլականները:

Վերջում աղոթելով երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման եւ Հայաստանի եւ Ռուսաստանի փոխհարաբերությունների ու գործակցության արգասավորման համար՝ Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված Իր սուրբ Աջով օրհնի հայոց թեմի եկեղեցանվեր, հայրենաշեն ու ազգանպաստ բոլոր բարի ջանքերն ու իրագործումները:

Գիտաժողովին զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Շահե Ծ. վրդ. Անանյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վարդան Տողանյանը:

Երկօրյա գիտաժողովը կազմակերպվել է թեմի հայագիտական կենտրոնի կողմից՝ համագործակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային արխիվի, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, ՌԴ-ում ՀՀ դեսպանատան եւ Մոսկվայի մարզի գլխավոր արխիվային վարչության:

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր համալիրի բացումը

Սեպտեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր շենքի բացման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին դպրոցի բարերար տիար Էդուարդո Էօրնեկյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լ. Մկրտչյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կ. Գրիգորյանը, պաշտոնատար այլ անձիք, օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, կազմակերպությունների ղեկավարներ, բարերարներ, պատվավոր հյուրեր, դպրոցի ուսուցչական կազմը, աշակերտներ եւ ծնողներ:

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատությունը հիմնադրվել է 2009 թ. սեպտեմբերի 1-ին՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, ազնիվ բարերությամբ Էդուարդո Էօրնեկյանի՝ ի հիշատակ բարերարի ծնողների՝ տեր եւ տիկին՝ Փանոս եւ Սրբուհի Էօրնեկյան ամուլի: 2012 թվականին Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ եւ տիար Էդուարդո Էօրնեկյանի հովանավորությամբ սկսվեցին «Էօրնեկեան» հանրակրթական ուսումնական հաստատության նոր շենքի կառուցման աշխատանքները (ճարտարապետ՝ Արտակ Ղուլյան, շինարար՝ Արամայիս Ոսկանյան): Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանող կրթահամալիրն ունի 27 դասասենյակ, 8 լաբորատորիա, ընթերցասրահ, գրապահոց, հանդիսությունների դահլիճ, ճաշասրահ, բուժսպասարկման կենտրոն, ուսուցիչների աշխատանքային խորհրդակցությունների եւ հանգստի սենյակներ: Ներկայումս դպրոցում գործում է 1-12-րդ՝ թվով 32 դասարան՝ 471 աշակերտով, որոնց դասավանդում է արհեստավարժ եւ հմուտ 58 մանկավարժ:

Դպրոցի մուտքի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին, ՀՀ նախագահին եւ բարերարին դիմավորեցին շեփորահարներն ու թմբկահարները, ապա երկու էօրնեկյանցիներ նրանց մատուցեցին աղ ու հաց, որից հետո սկսվեց բացման պաշտոնական արարողությունը:

Դպրոցի երգչախմբի կատարմամբ հնչեց Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը, որի ներքո բարձրացվեցին ՀՀ եւ հայրապետական դրոշները:

Դպրոցի սաներ Գոռ Հարությունյանի (10-րդ դասարան) եւ Գոհար Աղաջանյանի (11-րդ դասարան) ողջույնի խոսքերից հետո կատարվեց «Հրաշափառ» շարականը, որով եւ սկսվեց դպրոցի նորակառույց շենքի օրհնության կարգը՝ նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Արարողության ավարտին Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց բարերար Էդուարդո Էօրնեկյանին, ապա Վեհափառ Հայրապետը եւ բարերարը հատեցին դպրոցի մուտքի ժապավենը:

Այնուհետեւ տեղի ունեցավ շրջայց դպրոցում: Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն, դպրոցի հոգեւոր տեսուչ Վարդան եպս Նավասարդյանը ներկայացրեց դպրոցում ստեղծված կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, գեղագիտական եւ բարոյական դաստիրակության զարգացմանը նպաստող պայմանները: Բարձրաստիճան հյուրերն այցելեցին ժամանակակից տեխնիկայով հագեցած լսարաններ, սարքերով եւ անհրաժեշտ նյութերով կահավորված՝ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի, ինֆորմատիկայի լաբորատորիաներ, լինգաֆոնային դասասենյակ, որոնք ամուր հիմք են ստեղծում խոր եւ կայուն գիտելիքներ, հմտություններ եւ կարողություններ ձեռք բերելու համար:

Շրջայցից հետո նորակառույց շենքի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն:

«Էօրնեկեան» դպրոցի օրհներգից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Վարդան եպս Նավասարդյանը: «Կառուցելով դպրոց՝ մենք կառուցում ենք բանակ, կառուցում ենք վանք ու եկեղեցի, կառուցում ենք տնտեսություն եւ հիմք դնում առողջ ընտանիք կառուցելու նախաքայլին, որը հայորդիներիս համար եղել է սրբազան պարտավորություն. այն չի սահմանափակվել միայն նյութականով, այլեւ եղել է հոգեւոր եւ իմացական կառույց, որով ապահովել ենք մեր ազգի գոյությունն ու հարատեւությունը:

Հայ կյանքի կենտրոնը միշտ եղել եւ մնում են մարդը եւ նրա կրթական նկարագիրը: Ազգային դպրոց կառուցելով՝ մեր հավատն ենք կառուցում՝ մեր զավակների միջոցով հավիտենականացնելով հայի տեսակի ինքնության ամբողջական նկարագիրը...»,- ասաց Վարդան սրբազանը՝ ընդգծելով, որ դպրոցում սովորածը ճշմարիտ արժեքներն են, որ մեր ազգի մեծերին սխրանքների են ուղղորդել:

Ապա ներկաները դիտեցին «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած ֆիլմը՝ դպրոցի հիմնադրման, արձանագրած հաջողությունների եւ ժամանակակից նոր համալիրի կառուցման մասին:

Դպրոցի բացման առիթով իր խոսքն ասաց նաեւ ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը ստանում է շատ գեղեցիկ նվեր, որը կարող է լուրջ դերակատարություն ունենալ տարածաշրջանում եւ Հանրապետությունում՝ մեծ ծրագրերի իրականացման գործում: ԿԳ նախարարը շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռին՝ կրթական համակարգի կողքին եւ նրան մասնակից լինելու, ինչպես նաեւ Վեհափառ Հայրապետին՝ կրթության նկատմամբ դրսեւորվող հոգածության համար: Նա նաեւ իր երախտագիտությունը հայտնեց ազգային բարերարին՝ երկրի սրտում՝ Սուրբ Էջմիածնում, հրաշք դպրոցը ստեղծելու առիթով՝ հավելելով, որ դա, իսկապես, օրինակ կարող է դառնալ շատ եւ շատ այլ բարերարների համար:

Երախտագիտության խոսք ասաց նաեւ դպրոցի տնօրեն տիկին Սուսաննա Վարդանյանը:

Հանդիսությունն ամփոփվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով.

Շարունակությունը՝ էջ 7

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր համալիրի բացումը

Սկիզբը՝ էջ 6

«Տոնական օր է այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Աշակերտներին եւ մանկավարժներին ընդունելու համար իր դռներն է բացում «Էօրնեկեան դպրոցի» նորաշեն, մեծ ու գեղեցիկ այս շենքը: Կրթօջախն այսուհետ կգործի մայրավանքի տարածքում, որտեղից եւ սկիզբ են առել հայկական գիրն ու դպրությունը:

Մեր Եկեղեցին սկզբնավորման օրից ի վեր առանձնակի ուշադրություն է դարձրել ուսմանն ու գիտությանը, որպեսզի մեր ժողովրդի լուսավորված միտքն ու հոգին ճանաչեն աշխարհը եւ նրա Արարչին:

Եկեղեցին եւ դպրոցը մեր կյանքի դիմագիծն են: Ամենուրեք, որտեղ էլ ապրել է մեր ժողովուրդը, առաջին գործ որպես՝ կառուցել է լուսավորության այս օրրանները, որոնք եղան նաեւ ազգապահպանման կենսական աղբյուր եւ ապահով պատվար:

Այսօր՝ տիեզերքի ճանաչողության, գիտատեխնիկական աննախադեպ նվաճումների մեր օրերում, անհրաժեշտ է, որ մարդկությունը հետ չմնա նաեւ հոգեւոր կյանքի օրենքները ճանաչելուց, այլապես կույր սիրտը դեպի ո՞ւր պիտի առաջնորդի մեր դարի գերունակ մարդու կարողությունները: Առաքյալը պատվիրում է՝ «ճանաչեք Քրիստոսի սերը, որ գերազանց է, քան ամեն գիտություն» (Եփ. 3.19), քանզի չար բան չի խորհում եւ չարը չի գործում:

Մեր զավակներին բարու մեջ հաստատելու, հոգեւոր արժեքներով սնուցանելու եւ ամեն անհրաժեշտ գիտելիքները փոխանցելու գործում անփոխարինելի է մնում դպրոցի դերը, որտեղ երեխաներն անցկացնում են իրենց կյանքի կարեւոր շրջանը՝ ուսման ու հասունացման ավելի քան մեկ տասնամյակ:

Աճող սերնդի նկարագրի հիմերը, արդարեւ, պիտի կառուցենք ժայռի վրա, որը, ինչպես մեր Տերն օրինակ բերեց, կանգուն է մնում հողմերի ու հորձանքների հանդիման, որպեսզի նրանք կարող լինեն դիմակայելու դժվարություններին եւ ունենան ներուժը՝ արարելու, կյանքը բարեփոխելու եւ զարգացնելու:

Այսօր գնահատանքով ենք արձանագրում, որ «Էօրնեկեան դպրոցի» պատասխանատուները եւ մանկավարժները, աջակցությամբ մեր Եկեղեցու քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, ջանում են կրթել համակողմանի զարգացած, հոգեւոր-բարոյական արժեքներ ունեցող անհատներ, պատասխանատու զավակներ մեր ժողովրդի եւ հայրենիքի համար: Սերը սաների նկատմամբ եւ ուսման մեջ պահանջկոտությունը պայմանավորել են այն հաջողությունները համապետական օլիմպիադաներում, միջազգային մրցույթներում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, մշակութային փառատոներում, որոնք գրանցել են, եւ հավատում ենք՝ պիտի շարունակեն ձեռք բերել մեր դպրոցի սաները:

Աստվածաշունչը մեզ ուսուցանում է. «Ով սիրում է իր որդուն, նրանից օգուտ կտեսնի եւ ծանոթների մեջ նրանով կպարծենա» (Սիրաք 30.2). արդարեւ, սիրելի՛ սաներ «Էօրնեկեան դպրոցի», դուք ձեր աշխատասիրությամբ ու ժրաջանությամբ այդ երանությունը պիտի շնորհեք Մեզ, հարգարժան պրն Էօրնեկյանին, որպեսզի աստվածաշնչական վկայությամբ՝ պարծենանք ձեզանով, ոչ միայն մենք, այլեւ՝ ամենքը, նաեւ օգտակար լինեք մեր երկրին՝ այս դպրոցից ձեր ստացած մեկի փոխարեն բերելով երեսուն, վաթսուն եւ հարյուր արդյունք»:

Նորին Սրբությունը վերհիշեց, թե ինչպես ազգային բարերար Էդուարդո Էօրնեկյանը մեծ հոգածությամբ ստանձնեց դպրոցի հովանավորությունը՝ հանձն առնելով նաեւ նոր շենքի կառուցումը: Աղոթք բարձրացնելով Փանոս եւ Սրբուհի Էօրնեկյանների հոգիների հանգստության համար՝ Հայոց Հայրապետը նշեց, որ տիար Էդուարդո Էօրնեկյանի ծնողասիրությունը, հայրենասիրությունը, ազգային ու հայրենական կյանքում բարեգործությունները, անձնական հաջողությունները լավագույն օրինակ են դպրոցի սաների եւ բոլոր հայորդիների համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց պետական ավագանու ներկայացուցիչներին՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ, հյուրերին եւ դպրոցի բոլոր բարեկամներին: Խորին շնորհակալության զգացումներով Վեհափառ Հայրապետն իր լավագույն մաղթանքները բերեց տիար Էդուարդո Էօրնեկյանին, նրա ընտանյաց անդամներին, նրան գործակից անձնակազմին, որոնց ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ իրագործել այս ամենը:

Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց նաեւ դպրոցի տնօրենին, անձնակազմին, հոգաբարձուների խորհրդի անդամներին, ծնողներին, աշակերտներին եւ Մայր Աթոռի բոլոր այն կառույցներին, ովքեր իրենց ներդրումն են ունեցել դպրոցի կայացման, նաեւ՝ նոր շենքի կառուցման գործում:

Գարեգին Բ Հայրապետը հայցեց Բարձրյալն Աստծուն խաղաղության մեջ պահպանել հայրենիքն ու ժողովրդին, լուսավոր պահել հայոց կրթօջախները, պայծառ՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Վերջում դպրոցի բակում կատարվեց ծառատունկ: Վեհափառ Հայրապետը, ՀՀ նախագահը եւ Էդուարդո Էօրնեկյանը տնկեցին մշտադալար եղեւնիներ՝ ի նշանավորումն դպրոցի նոր շենքի բացման:

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց» ուսումնական հաստատության նոր կրթահամալիրի բացման արարողությունն ավարտվեց Էօրնեկյանցի աշակերտների շուրջպարով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԱՆԶԱՐԱՆ» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱԳԴԵՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, տեղի ունեցավ «Հայկական ազգային երաժշտական գանձարան» նախագծի պաշտոնական շնորհանդեսը:

«Մշակութային վերածնունդ» հիմնադրամը, որի նպատակն է աջակցել հայ մշակույթին ու արվեստի տարբեր ճյուղերին, հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտական ժառանգության պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, «Հայկական ազգային երաժշտական գանձարան» նախագծի շրջանակներում ստեղծել է հայ ժողովրդական, հոգեւոր եւ աշուղական երաժշտության առցանց երաժշտական ձայնադարան, տեսադարան եւ գրադարան, հրատարակել Կոմիտաս վարդապետի կողմից կազմված «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգերի ընտրանին, ինչպես նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ վերահրատարակել Մակար Եկմալյանի «Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (երգչախմբի համար նախատեսված բաժինը՝ նոտագրության ժամանակակից չափանիշներին համապատասխան) եւ Նիկողայոս Թաշչյանի կողմից գրի առնված եւ հայկական նոտագրության համակարգից եվրոպական նոտագրության փոխադրված «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» օգտաշատ հատորները:

Շնորհանդեսին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի տնօրինությունը եւ նախագծի աշխատանքներին իրենց մասնակցությունը բերած անձինք, մշակույթի գործիչներ, տարբեր կրթօջախների եւ գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Տերունական աղոթքից հետո ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Նաթան արք. Հովհաննիսյանը: Սրբազան հայրը խորհրդանշական նկատեց, որ հայ մշակույթին նվիրված այս միջոցառումն անցկացվում է մեծանուն Կոմիտաս վարդապետի ծննդյան օրը: Խոսելով ներկայացված հրատարակությունների մասին՝ Նաթան արքեպիսկոպոսն անդրադարձավ հայ մշակութասեր հասարակությանը եւ աշխարհին այս նախագծի միջոցով մատուցվող արժեքավոր ընծային: Սրբազանը կարեւորեց նախագծին մասնակցած բոլոր անձանց ջանքերը՝ ուղղված հայոց մեծ եւ հին մշակույթի պահպանությանն ու հոգատարությանը:

Շնորհանդեսը շարունակվեց «Մշակութային վերածնունդ» ֆիլմի դիտումով, այնուհետեւ «Հայկական ազգային երաժշտական գանձարան» նախագծի կատարած աշխատանքների եւ մասնավորապես լույս ընծայված հրատարակությունների մասին խոսեց կոմիտասագետ, Հայաստանի երգահանների միության վարչության անդամ Արթուր Շահնազարյանը:

Ծրագրի մտահղացման, գաղափարախոսության եւ իրագործման մասին խոսեց «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի հիմնադիր-նախագահ Արթուր Ջանիբեկյանը: Վերջինս իր շնորհակալությունը հայտնեց հիմնադրամի աշխատակազմին եւ հիմնադրամի հետ գործակցած բոլոր անհատներին: Նա ընդգծեց, որ ծրագիրը կարեւոր առաքելություն ունի մատաղ սերնդի դաստիարակության գործում եւ հնարավորություն է ընձեռում ապագա սերունդներին օգտվելու եւ ճանաչելու հայ ազգային ու հոգեւոր երաժշտությունը: Արթուր Ջանիբեկյանը հավաստիացրեց, որ հիմնադրամը շարունակելու է իր գործունեությունը՝ կյանքի կոչելով բազում գեղեցիկ նորանոր իրագործումներ:

Խոսքի ավարտին տիար Ջանիբեկյանը հիմնադրամի անունից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրաբերեց նոյյան տապանի տեսքով պատրաստված հայկական ազգային երաժշտական գանձարան-նվագարկիչը, որն իր մեջ ամփոփում է «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի շրջանակներում ձայնագրված 500 նմուշ:

Շնորհանդեսն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով: Հայրապետական իր սերն ու օրհնությունը բերելով հանդիսության բոլոր մասնակիցներին՝ Վեհափառ Հայրապետն ասաց. *«Այսօր՝ հաղորդակցության մեծ հնարավորությունների մեր օրերում, հիրավի, անհրաժեշտություն կա մեր ազգային մշակույթի դարավոր ձեռքբերումները վերարժեւորելու, ճաշակով ու բարձր մակարդակով ներկայացնելու եւ դրանցով կրթելու մեր ժողովրդին՝ մեր արժեքները դարձնելով կյանքի, առօրյայի մաս:*

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Ջեյմս Ռասսելը հայ ժողովրդի կրակապաշտության մասին

Սկիզբը՝ թիվ 16-17

Նախ, հասկանալի է, որ Պարսից արքունիքը որեւէ աննշան վասալ թագավորի դեմ դավադրություն չէր կազմակերպի: Եվ ապա, ինչպես կարելի է 282-283 թվերին մինչեւ Ասորեստան արշաված եւ Տիզբոնի դռների առաջ ճակատամարտ մղած Խոսրով Մեծի պատմական սխրանքն անտես առնելով՝ անհիմն ենթադրել, թե «հայերն ակամայից յուրացրել են օտար հերոսին՝ իրենցը չունենալու պատճառով»: Նման եզրակացությունը պետք է վերագրել XIX դ. վերջին եւ XX դ. սկզբին ռուսական ցարիզմի բացահայտ հակահայկական քաղաքականությանը, որ դրսեւորվել է նաեւ պատմագրության եւ ամեն գաղափար վերահսկող ցարական գրաքննության մեջ:

Աննինսկին Ագաթանգեղոսի Պատմությունից (պարգ. 39-46), Զենոբ Գլակից եւ Ուխտանեսից քաջատեղյակ է, որ երբ գոթերի իշխանը պահանջում է Հունաց թագավորից դուրս գալ իր դեմ մենամարտի եւ խուսափել զորքի կոտորածից, այդ առաջարկից սարսափած Դիոկղետիանոսը, զորավար Պրոբոսից տեղեկանալով նույն այդ «աննշան» թվացող Խոսրովի որդի հսկայազոր Տրդատի մասին, թախանձում է նրան իր փոխարեն «կայսերակերպ» պճնված դուրս գալ գոթերի իշխանի դեմ: Եվ հսկայազոր «կայսերակերպը», աշտանակելով նժույգը, սլանում է գոթերի իշխանի դեմ եւ մենամարտում հաղթելով նրան՝ ձիու ետեւից քարշ է տալիս մինչեւ Դիոկղետիանոսի արքունիքը, որի համար կայսրը «կայսերակերպին» 298 թվին թագադրում է Մեծ Հայքի թագավոր:

Այս ժամանակագրական կարեւոր ուղղումով արդարանում է նաեւ Ագաթանգեղոսի Պատմության մեջ առկա այն վկայությունը, թե Անակի կատարած սպանության լուրը լսելով՝ Արտաշիրը «բազում ուխտ ատրուշանացն կատարէր /…/» (Ագաթ., պարգ. 35): Եվ իրոք, Իրանում բազում ատրուշաններ կարող էին հիմնված լինել ոչ թե III դարի սկզբին՝ Արտաշիր I-ի օրոք, այլ Կարտիր մոգպետի ձեռքով ամբողջ երկրով մեկ կրակապաշտություն տարածելուց հետո՝ 270-280-ական թվերին: Սրանով քրիստոնեության մուտքը Հայաստան III դարի սկզբի փոխարեն ընդհուպ մոտենում է իրական պատմական տարեթվին՝ Խոսրով Մեծի որդու՝ երիտասարդ Տրդատի թագադրումը եւ Հռիփսիմյան կույսերի գալուստը Վաղարշապատ 298 թվին, քրիստոնեության մուտքը Գրիգոր Լուսավորչի նոր ուսմունքով՝ 301 թվին: Հարցականի տակ է մնում միայն Խորվիրապում Գրիգորի 15-ամյա բանտարկությունը, որը ժամանակի առումով ավանդական բանահյուսության ծիրում է, եւ բնական է զետեղել այն 298-301 թվերի միջակայքում: Ըստ այդմ՝ Խորվիրապում գտնվելու ժամանակը՝ «հնգետասան ամ» (Ագաթ., պարգ. 215) պետք է ուղղել՝ «հնգետասան ամիսս»:

❖❖❖

Այժմ ժամանակն է մի առ մի հերքելու պրոֆ. Ռասսելի բոլոր կամայական մեկնաբանումները, երբ հակառակ պատմական իրողության՝ արեւմտյան որոշ տեղեկագիրներ հայ ժողովրդի նախաքրիստոնեական շրջանը ներկայացնում են կրակապաշտության լույսի ներքո: Իմ առարկությունները հենվելու են բացառապես պատմական փաստերի վրա, եւ կարծում եմ, որ դրանք միանգամայն բավարար են հերքելու խնդրո առարկա նորահնար տեսակետը:

1. Ագաթանգեղոսի Պատմության մեջ հեթանոսական շրջանի վերաբերյալ պահպանվել են բացառիկ կարեւոր վկայություններ Պարսից եւ Հայոց պաշտամունքային ծիսակարգերի տարբերության մասին, որոնց վրա ուշ չեն դարձրել նախաքրիստոնյա հայերին մոխրապաշտ հռչակող ամերիկյան հեղինակները: Այժմ կներկայացնեմ երկու համանման դրվագ Ագաթանգեղոսից եւ Եղիշեից, որոնց համադրումով միանգամից հերքվում է հայ ժողովրդի կրակապաշտ լինելը նախքան քրիստոնեությունը:

ա. Ագաթանգեղոսը պատմում է, թե Հայոց Խոսրով Մեծ թագավորը՝ Տրդատ Մեծի հայրը, Պարսից Արշակունի թագավոր Պարթեւ Արտավանի սպանության վրեժը լուծելու համար մեծ զորքով պատերազմի ելավ Սասանյան Արտաշիր թագավորի դեմ եւ մեծ հաղթությամբ, բազում ավարով ու ցնծալի ուրախությամբ վերադարձավ Հայոց կողմերը՝ Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը: Հրաման տվեց բոլոր կողմերը դեսպաններ ուղարկել, հրովարտակ հղելով՝ ուխտի գնալ յոթ մեհյանների բագիններին, պաշտամունք կատարել աստվածների կուռքերին. «…հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք եւ սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք եւ սպիտակ ջորւովք, ոսկեղէն եւ արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն եւ ոսկովք պսակօք եւ արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով եւ արծաթով, ի հանդերձս պայծառս եւ ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, եւ մեծամեծ պարգեւս քրմացն շնորհէր» *(Ագաթ., պրգ. 21, 22)*: **բ.** Եղիշեն պատմում է, թե՝ Պարսից արքայից արքա Հազկերտը հոռոմների եւ քուշանների դեմ տարած հաղթանակի առթիվ «…աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք եւ գիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի, եւ խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ. պսակօք եւ պատուովք մեծարեաց զբազումս ի մոգաց եւ զբազմագոյնս ի մոգպետաց» *(Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 11-12)*:

Սույն երկու համանման հատվածների համադրումից պարզվում է, որ հեթանոս կռապաշտ հայ թագավոր Խոսրովը եւ կրակապաշտ արքայից արքա Հազկերտը միանգամայն տարբեր ծեսերով են պաշտում իրենց հաղթանակ պարգեւած աստվածներին. - հայ թագավորը (III դ. սկզբին) դեսպանների միջոցով հրովարտակ է ուղարկում Հայաստանի յոթ մեհյաններին՝ սպիտակ ցուլեր եւ սպիտակ նոխազներ զոհել, եւ բազում նվերներով մեծարում իր Արշակունյաց ազգի հայրենի սրբավայրերը, իսկ բերած ավարի հինգերորդ մասը բաժին հանում եւ մեծամեծ պարգեւներ շնորհում քուրմերին, մինչդեռ Սասանյան Հազկերտ Բ Պարսից արքայից արքան (V դ. կեսին) ավետաբերներ ուղարկեց իր աշխարհի բոլոր ատրուշաններին՝ սպիտակ ցուլեր եւ գիսավոր նոխազներ զոհելու կրակին եւ այն անդուլ բորբոքելով՝ թանձր ծխով առատացրեց պիղծ պաշտամունքը, իսկ մոգպետներին ու մոգերին մեծարեց պսակներով ու պատվով:

Նույնիսկ խիստ նախապաշարված կամ կանխակալ միտումներով շեղված ընթերցողը այս համեմատությունից կարող է միայն եզրակացնել, որ քրիստոնեություն ընդունելուց առաջ հայերը պաշտել են ոչ թե կրակին, այլ իրենց հայրենական կուռքերին՝ ավանդաբար ընդունված զոհաբերությամբ եւ նվերներով, իսկ հայ հեթանոս քուրմերն էլ չեն կարող նույնացվել կրակապաշտ պարսից մոգերի հետ: Ի դեպ, նույնիսկ հայ քրիստոնյա վարդապետները, որքան էլ իրենց երկերում աշխատել են անբարենպաստ լույսի տակ ներկայացնել հեթանոս հայ քուրմերին եւ առանց քողարկելու նկարագրել են Արձան քրմապետի հրահրած զինված պատերազմը՝ նոր հավատը տարածող Գրիգոր Լուսավորչի եւ Տրդատ թագավորի զորքի դեմ, բայց երբեք չեն մեղադրել իրենց հակառակորդ այդ նույն հեթանոս քուրմերին՝ կրակապաշտության համար:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱԳԴԵՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ





Սկիզբը՝ էջ 7

Ուրախությամբ ենք արձանագրում, որ «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի կողմից այս ուղղությամբ նվիրյալ ջանքեր են ներդրվում՝ ժողովրդական ու հոգեւոր երաժշտության բացառիկ նմուշներն ուսումնասիրելու, նոտագրելու, թվայնացնելու, համապատասխան նոր հրատարակություններ պատրաստելու համար: Հիմնադրամի հովանավորությամբ կյանքի կոչվող ծրագրերը նպաստում են մեր ժողովրդական ու հոգեւոր երաժշտական ժառանգության պահպանմանը, խրախուսում հավատարմությունն ու նախանձախնդրությունը մեր մշակույթի, ի մասնավորի՝ երաժշտարվեստի դարավոր ավանդների հանդեպ՝ պատշաճորեն դրանք մատուցելով մեր ժողովրդին, ինչպես նաեւ միջազգային հանրությանը: Այս իմաստով ուշագրավ է եւ գնահատանքի արժանի նաեւ նոյյան տապանի տեսքով պատրաստված երաժշտական գանձատուփը, որի մեջ գետեղված են «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի շրջանակներում ձայնագրված նմուշները: Հիշյալ ձեռնարկումները կարեւոր ազդակ են նաեւ նոր սերնդին մեր մշակութային հարուստ ժառանգությանը հաղորդակից դարձնելու գործում:

Այս նախաձեռնությունների շրջանակներում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությամբ, «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ջանքերով հրատարակվել են Մակար Եկմալյանի հեղինակած Պատարագի՝ երգչախմբի համար նախատեսված բաժինը, ինչպես եւ երաժշտագիտական վերլուծություններով ու ժամանակակից նոտագրության չափանիշներով՝ երաժշտագետ Նիկողայոս Թաշչյանի կողմից գրի առնված Ժամագիրքը»:

Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի հիմնադիր Արթուր Ջանիբեկյանին, հիմնադրամի տնօրինությանն ու աշխատակիցներին՝ մշակութային արժեքների պահպանության գործում ստանձնած հանձնառությունների համար: Վեհափառ Հայրապետը նաեւ իր օրհնությունը բերեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական երաժշտության ամբիոնի վարչությանը, ինչպես եւ տարբեր տարիների ընթացքում կոնսերվատորիայում սովորող ուսանողներին, ովքեր իրագործել են Ժամագրքի վերծանման աշխատանքները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտանորոգ հաջողություններ ու արդյունավորում մաղթեց «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ազգանվեր ու մշակութասեր բարի գործերին:

Հանդիսության ավարտին հոգեւոր երգերի կատարմամբ ելույթ ունեցավ Երեւանի պետական կամերային երգչախումբը՝ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ:

Լրատվական նյութերը՝

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 2.10.2017 թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ